ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 15 » ապրիլի 2024 թվականի N: 148 -Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԲՅՈՒՐԱԿՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼՈՒՍԻՆԵ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասի, 220-րդ հոդվածի 1-ին մասի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասի 20-րդ կետի, 17-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բյուրակնի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ներքին կարգապահական կանոնները, անհիմն համարելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բյուրակնի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լուսինե Մելիքյանի 2024 թվականի ապրիլի 4-ի և ապրիլի 5-ի գրավոր բացատրությունները.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու և ներքին կարգապահական կանոնները խախտելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բյուրակնի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լուսինե Մելիքյանին հայտարարել նկատողություն:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է